

Իլիա Արուստան

ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԳՈՐԾԱԾՎԱԾ ՄԻ ՆՈՐ ԲԱՌ

Հին հայերենի առաջին լիակատար բառարանը՝ «Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի», ինչպես հայտնի է, կազմված է հին հայկական թե ինքնուրույն և թե թարգմանական գրականության բնագրերի հիման վրա։ Հետագայում, բառարաններ կազմողներն այդ բառարանի բառամթերքին ավելացնում են որոշ քանակությամբ նոր բառեր, գլխավորապես քաղված այն գրական հուշարձաններից, որոնք հետզհետե հայտարարվում էին ձեռագրերով հարուստ գանազան ձեռագրատներում։ Բայց ժամանակի ընթացքում պարզվեց, որ օգտագործված աղբյուրներում էլի գտնվում են այս կամ այն թվով բառեր, որոնք ամբողջովին քաղված չեն և վրիպել են հետաքրքրվող անձանց ուշադրությունից։ Այս թերությունը վերացնելու նպատակով ամենից մեծ ջանք թափել է հայ բառարանագիտության կոթողը հանդիսացող աշխատությունը՝ «Հայերեն Արմատական բառարանի» հեղինակը, պրոֆ. Ն. Աճառյանը, որը այդ բառերի կապակցությամբ առանձին աշխատություններ ունի մի ընդհանուր վերնագրով՝ «Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ»։

Բայց ոչ հին հայերենի բառարաններում և ոչ էլ պրոֆ. Ն. Աճառյանի հավաքած նյութի մեջ չի երևում օտար ծագում ունեցող մի բառ, գործածված մի այնպիսի գրքում, որը միշտ ձեռքի տակ են ունեցել հայ հեղինակները։ Այդ գիրքն է «Հարանց վարք»-ը, որը հրատարակված է երկու անգամ, մեկը՝ «ի քաղաք Շօշ, որ է Սպահան, յանապատն Նոր Զուղայոյ», 1641 թ., և մյուսը՝ Վենետիկում (բաղկացած երկու հատորից), 1855 թ.։ Հիշյալ հուշարձանի մեջ, այն գլխում, որի վերնագիրն է «Լասն պոռնկութեան», մի տեղ կարդում ենք՝ «և մտեալ անկցիս ի վերայ լեառնակի (var. լեառնականի) հարցն և ասա. Ա. հարցն մերոց, օգնեա ինձ [abs. 1641 թ. հրատ. մեջ] և փրկեա զիս ի փորձանացս յայսցանէ պոռնկութեան [պոռնկութենէ—1641 թ. հրատ. մեջ]»¹։ Ընդգծված բառը վրացերեն «Հարանց վարքի» («მამათა სკოლეგობი») բնագրի մեջ կարդում ենք այսպես. «მევედოა საბარბოსა ზედა წმიდათა მამათასა და თქუ: რომ თომადოროსო, შემწე მეყავ მე და მიხსენ მე განსაცდელისა ამისგან სიძვისა (Վրաստանի Թանգարանի ձեռագրերի A ֆոնդ, № 1105, 160 ր., 1 սյուն)»²։ Համեմատու-

¹ S. 1641 թ. հրատ., էջ 225, 2-րդ սյուն, տող 30 և Վենետ. հրատ. I հատ., էջ 603, տող 30)։

² Վրացերենում «Հարանց վարքի» մի քանի խմբագրություն կա, բայց ոչ մեկը գեղեցիկ հրատարակված չէ։ Մատենադատ տեղը վերջին, լրիվ խմբագրությունից է, որը թարգմանված է հունարենից Ն. Գ. Երկրորդ կեսում, Թեոֆիլ Թարգմանի ձեռքով։

թյունից պարզվում է, որ «լեառնական» կամ «լեառնակ» համապատասխանում է վրացերեն სადარბო-ին (= գերեզման), ինչ և թելադրում է լեառնակ (var. լեառնական) ձևի տակ տեսնել համարյա թե նույնահնչյուն հունարեն բառը՝ λαρναξ ἄκος (= արկղ, դադաղ, գերեզման)։ Երևի հունարեն բնադրի մեջ այդ բառն է եղել դրված, որ հայ թարգմանիչը տառադարձել է իսկ վրացի թարգմանիչը (Թեոփիլե Թարգման) փոխադրել է վրացերեն բառով։ Հին վրացերեն գրական երկերի մեջ, լինեն նրանք ինքնուրույն թե թարգմանական, հիշյալ հունարեն բառը հաճախ է դործածված ღარდაჯ-ი ձևով։ Նույն «լեառնակ» ձևով սպասելի էր այս բառը և հայերենում։ Իմ կարծիքով, այդպես էլ պիտի դրված լիներ հայ թարգմանչի ձեռագրում, բայց հետադաշում գրիչները (արտադրողները), ինչպես երևում է, չհասկանալով այս օտար բառի իմաստը, ներկայացրել են իրր թե այստեղ «լեառնակ» թե «լեառնական» բառը lapsus calami-ն է և այդ պատճառով ուղղել են «լեառնակ» — «լեառնակ, լեառնական»։

Այսպես ուրեմն, հին հայերենում գոյություն ունի մի բառ ևս՝ լառնակ, մեզ հասած աղճատված լեառնակ կամ լեառնական ձևով։ Հին հայերենի լառնակ բառը, որը գեոևս միայն «Հարանց վարժի» հիշյալ տեղում է դործածված, նշանակում է «գերեզման» և փոխառություն է նույնանիշ հունարեն λαρναξ բառի։